EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՈՐՈՇՈՒՄ

Գանգատ թիվ 6920/14

Հովհաննես ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆՆ ընդդեմ Հայաստանի

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք), 2022 թվականի ապրիլի 7-ին հանդես գալով Կոմիտեի հետեւյալ կազմով՝

Յոլիեն Շուկինգ [Jolien Schukking]՝ *Նախագահ,*

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Անա Մարիա Գուերա Մարտինս [Ana Maria Guerra Martins]՝ *դատավորներ,*

եւ Վիկտորիա Մարադուդինա [Viktoriya Maradudina]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալի պաշտոնակատար*,

հաշվի առնելով 2013 թվականի դեկտեմբերի 13-ին ներկայացված վերոնշյալ գանգատը,

անցկացնելով խորհրդակցություն, կայացրեց հետեւյալ որոշումը.

ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Դիմումատու պրն Հովհաննես Տիրատուրյանը ծնվել է 1968 թվականին: Նրան ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Տ. Սաֆարյանը:

Կոնվենցիայի 3-րդ եւ 13-րդ հոդվածների համաձայն՝ կալանքի տակ գտնվելու ընթացքում պատշաճ բուժօգնություն ենթադրաբար չտրամադրելու վերաբերյալ ներկայացված գանգատն ուղարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարություն (Կառավարություն), որը ներկայացրել է գանգատի ընդունելիության եւ ըստ էության քննության վերաբերյալ իր դիտարկումները: Դիտարկումներն ուղարկվել են դիմումատուին, որին առաջարկել են ներկայացնել սեփական դիտարկումները: Քարտուղարի նամակին չեն պատասխանել:

2020 թվականի դեկտեմբերի 17-ի գրությամբ, պատվիրված նամակով ուղարկելու միջոցով դիմումատուն ծանուցվել է այն մասին, որ իր դիտարկումները ներկայացնելու համար թույլատրված ժամկետը լրացել է 2017 թվականի օգոստոսի 2-ին, եւ որ ժամկետը երկարաձգելու վերաբերյալ միջնորդություն չի ներկայացվել: Դիմումատուի ուշադրությունը հրավիրվել է Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետին, որով նախատեսվում է, որ Դատարանը կարող է գանգատը հանել գործերի ցուցակից, եթե հանգամանքները հանգեցնում են այն եզրակացության, որ դիմումատուն մտադիր չէ հետամուտ լինել իր գանգատին: Դիմումատուի ներկայացուցիչն այդ գրությունն ստացել է 2021 թվականի հունիսի 17-ին: Այնուամենայնիվ, որեւէ պատասխան չի ստացվել:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

Վերոնշյալի լույսի ներքո, ինչպես նաեւ Կոնվենցիայով եւ դրան կից արձանագրություններով երաշխավորված իրավունքների նկատմամբ հարգանքի մասով որեւէ հատուկ հանգամանքի բացակայության պարագայում Դատարանը, Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն, համարում է, որ գանգատի քննությունը շարունակելն այլեւս արդարացված չէ:

Հետեւաբար գործը պետք է հանվի ցուցակից:

Այս հիմնավորմամբ Դատարանը միաձայն՝

Որոշում է գանգատը հանել գործերի ցուցակից:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2022 թվականի մայիսի 5-ին:

Վիկտորիա Մարադուդինա՝	Յոլիեն Շուկինգ՝
Քարտուղարի տեղակալի պաշտոնակատար	Նախագահ